### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
### ԱՐԻԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

03 մայիսի 2019թ.
ժամը 14:30

*Մասնակցում էին հանձնաժողովի՝*

*նախագահ՝* — *Ռ. Համբարյանը*
*անդամներ՝* — *Լ. Նիկողոսյանը*
*Ա. Իսակովը*
*քարտուղար՝* — *Ա. Կարայանը*

***1. Լսեցին և փնտրեցին.***

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԱՐԻԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Մեղխար», «ԹԱԳ ՀԷՄ» և «Ցունիֆիմ» ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ծանուցվել են՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

***2. Հանձնաժողովն արձանագրեց.***

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է եզրակացություն /կցվում է/:

2.3 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մասնակիցների կողմից ներկայացվել են և համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

***3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.***

3.1 Ընտրված մասնակիցներ ճանաչել.
ա) «Մեղխար» ՍՊԸ՝ 1-ին չափաբաժնով
բ) «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ՝ 2,3,4,6 չափաբաժիններով
գ) «Ցունիֆիմ» ՍՊԸ՝ 5,7,8 չափաբաժիններով:

3.2 Հաստատել «ԱՐԻԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

*Հանձնաժողովի*

*նախագահ՝* ____________ *Ռ. Համբարյան*
*անդամներ՝* ____________ *Լ. Նիկողոսյան*
____________ *Ա. Իսակով*
*քարտուղար՝* ____________ *Ա. Կարայան*